



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material



3221

28  
Z - 26

18 60



ՅԱԼԱՏՅԱՆ

ի

ՎՈՍՔՈՐ

ՅԵՐԱԿ ԱՊԱԳԻՆ

ՅՈՒՂԱՐԻԹԻՒՆ Ա. Յ. ԳԻՒՐԲԱՆԱՆ

Կոստանդնուպոլիս, Ֆինանսներ

— 1860 —

28

Հ-26



ଅଧ୍ୟାତ୍ମିକ

p

all around



28 սց.

## Հ-26 ՊԵԱՏՈՆԻ ՎՈՍԹՈՐ

ԸՆԴՀԱԿ

ԴԻՄԱԿԱՒՐ

ՔԱՐՔ ՄԱՅԻՆ

Եւ

ՔԱՐՔ ՔՐԵԱՏՈՒՆԵԱԾ

ԵՎՈՒՆ ԳՐՎԻՆ

ԱՇԽԱՏԱՍԻՐԵԱՑ

ԱՐՄԵՆԱԿ Հ. ԶԻՉՄԵՃԵԱՆ

ՏՊԱԴՐՈՒԹԻՒՆ

ՌՈՒԲԵՆԻ Յ. ՔԻՒՐՔՃԵԱՆ

Կ. Պոլիս, Ֆիզմաննըլաք

— 1860 —

ԴՐԱՅՈՒՆԻ Հ ՄՈԱՄԲՈ

46800-ահ

1948 Խ Ե Կ Գ

Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ

**Տ · Տ · ՄԱՏԹԵՂՈՍԻ**

ՄՐԱՅՆԱԳՈՅՆ ԵՒ ՎԵՀԱՓԱԼԻ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ  
Ամենայն Հայոց

Ի ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԵԱՆ ՍՐԲՈՅ ԵՐՈՒՍԱՂԵՄԻ

**Յ · ՅՈՎԱՆՆԵՍԻ**

Արքազան Արքեպիսկոպոսի


ԵՒ Ի ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԵԱՆ Կ.-ՊՈԼՍՈՅ

**Յ · ՍԵՐԳՈՒ**

Արքազան Արքեպիսկոպոսի

1816

46



«ԱՅ ԻՆ + ... Այս պարհել բար մայն է խան Տեղուն մը»  
Յասուս Քրիստոս»: Գով. Զ. 14.

«Ո՛Հ աղոթամբ աղջիկ՝ մինչև ե՞րբ ապահովություն պարունակություն շնորհը լըս-  
լէ»: Առք. Երես. Լ.Ա. 22:

«Թիե՛ ա՞ իշխանին բարիստիւն +եղի դեմ ելլէ՛ գուա անդա-  
դի՛ ձիեր, զան զի ապահովություն մէջ ապահովություն իւ դադրեցնե»:

«Մեռած ճանմերն իւղագործին եղը գործահար իւնեն, +իւ ճը  
անմարտիւնուն ալ իւստանութիւնը և պատասխան երեւելը անպատա-  
հարդը արևոյեւ իւնեն . . . իւելւ պահան ըլլալուն համար իւ յիշար ըլ-  
լուը ամբուսն իւ յարանե»:

«Ի՞ր ալեղուն լուսաւասիւն եղող մարդը՝ իւ բոյնեն լուսաւասիւն եղող  
լուսաւանին ալեւ իւ»:

«Ո՛Հ զարդարին դանը դարձանակալ մի՛ ըլլար, անոք բնավա-  
րանը, մի՛ աւրեր»:

## ՍՈՂՈՄՈՆ

## ՅԱՐԱՋԱԲԱՆ

իրաւասիրութիւնը, Աղդային սէրն ու պատիւը, Կաթողիկոսական Սրբազն Գտհը, կ'ստիպեն զմեղ այս անդամասպարեզ ժամանելու, ուր Ամերիկայէն եկող Միսիօնարք տմարդաբար նախատինք կը տեղացընեն Հայ-Լուսաւորչական Եկեղեցւոյն, և անոր նորդնասիր Վրբազնագոյն Հոյրապետին վրայ: Մենք ալ ուրեմն ճակատաբաց ճշմարտասիրութեան անընկճելի զինուց պատսպարեալ իբր ճշմարիտ Հայ և ճշմարիտ Քրիստոնեայ<sup>\*</sup>, այս նոր ասպարիզին մէջ կը նետուինք, ընդհանուր իրաւասիրաց մրտադրութիւնը մեր վրայ հրաւիրելով քննելու անաչառաբար թէ՝ պիտի կարենա<sup>ն</sup>ք ճշմարտութեան Աստու ծոյ զօրութեամբը, Գողդովայի խաչին օժանդակութեամբը այս անդամյայտնելթէ, ի<sup>ն</sup>չ տարօրինակ և խաբեական ձեռնարկութիւններով, անիմաստ խրնդիրներով, անճոռնի տրամաբանութիւններով, ծաղրելի իմաստակաբանութիւններով, ևայլն, ևայլն, լեցուած աշխատու-

թիւն մըն է, այս օրեւս Ամերիկացի Երիցական Միսիոնարաց  
ճգնութեամբը նոր հրատարակեալ ԲԱՐԻ ՄԱՐԴ ԵՒ ԲԱՐԻ  
ՔՐԻՍՏՈՆԵԱՅ անուն գիրքը, 158 երեսներէ բաղկացեալ և տը-  
պեալ 'ի Տպարանի Յ. Փափաղեան:

Այս մասին մենք չենք պարծենար իբր Աստուածաբան մը,  
չէ. այլ մեր համարձակութիւնը՝ այսպիսի աշխատութեան մը  
ձեռք դարնելնուս ճշմարտասիրութիւննիս է. որն որ մեր մէկ հա-  
տիկ վահանը պիտի ըլլայ այս մեր ներկայ դորձքին մէջ, և մեր  
միմիայն ուղեցոյցը,

ԴԻՏՈՂՈՒԹԻՒՆ

Վերոյիշեալ Միսիօնարական ճղնութիւնը առջի անդամ  
երբոր մէկ ծայրէն մինչև միւս ծայրը կարդացի, չի կրցայ զար-  
մանքս բռնել թէ՝ ի՞նչպէս Ամերիկայի ուսումնարաններու մէջ  
կրթուող մէկը ձեռք զարկերէ այսպիսի աշխատութեան մը, որն  
որ եթէ նախատինք չի բերեր իւր հայրենեցը՝ մեծ հրաշք մը  
սեպուելու է: Առջի անդամչու զեցինք դայն քննութեան առնել.

վասն դի՛ չեինք կրնար հաւատալ, որ զայն անդամմը տէքէ անցընողները, չի տեսնեին անոր մէջ պարունակեալ խարեւթիւնները, սեաւ սուտերը, Սուրբ Գրոց եղած զրկանքները, կեղծ Աստուածարանութիւնները, անտեղի և քաշքշողական ծաղրելի մեկնութիւնները, և ասոնց ամենէն առաւել հեղինակին սըրտմութիւնը և կատաղի վայրաբարդութիւնը, մեր նորընտիր Արքազնասուրբ Հայրապետին դէմ, որն որ իրեն աշխատ է ու եղած է ... :

Բայց հասարակութիւնը, անմեղ պարզամիտ հասարակութիւնը, իրաւամբ շարժեց մեր սրտին կարեկցութիւնը, և ստիպեց դմեղ չի թողուլ զանոնք անմտադիր այս նոր ճիղութական թակարթէն զգուշացրնելու ... : Ահա մեր գլխաւոր պատճառը, որովանշուշտ չեինք կրնարներկայ աշխատութեանս ձեռք չի զարնելու, և այս մեր Աղքային սրբազն պարտականութենէն հեռի մնալու, ուստի սիրտ առինք, և երկնից շնորհիցը պատապարուելով՝ աշխատութեան սկըսանք, հաստատ հաւատալով՝ որ ճշմարտութեան Աստուածը ինչպէս որ պիտի օդնէ գրիչնուս, նշյնչափ ալ արդասաւոր պիտի ընէ աշխատութիւննիս, որով թէ մենք և թէ մեր սրտակիցարիւնամլիցներնիս պիտի միիթարուինք

Չրւղելով որ մեր ներկայ աշխատութիւնը վերսիշեալ դիմակաւոր ԲՍ.Ի ՄԱՐԴ և ԲՍ.Ի ԳՐԻՍՈՆԵՍ.Յին նման խառնաշփոթ, անյառաջարան, անբաժանելի և անվերջաբան թողուլ, աղէկ սեպեցինք զայն հեղինակութեան օրէնքին համաձայն, ինչպէս որ յառաջարանով և վերջարանով, նոյնպէս ալ զատքատ յօդուածներով կարգադրել . որով ընթերցողք փոխանակ ինքը լինենք կորսնցընելու խառնիխուռն ասացուածոց մէջ, պարզօքէն և դիւրութեամբ կարենան ինքը լինենք յաղեցընել . արդ ներկայ աշխատութեամբս մենք պիտի յայտնենք:

Ա. Գրքին պարունակած անվայել նախատինքները, թէ իբր մարդ և թէ իբր Քրիստոնեայ :

Բ. Անոր խարեւական ձեռնարկութիւններով, կեղծեալ տըրամարանութիւններով և խոկական խմաստակութեամբ. լիրլլալք

Գ. "Արդս ՚ի ընէ չար է,, մոլար դրութեանը դէմ:

Դ. Հեղինակին Հայաստանեայց Լուսաւորչական կը եղեց-

Պ.

Ժ

այն վրայ ունեցած տղիտութիւնը:

Ե. Գրքին անկարևոր նիւթերով և յայտարարութիւններով լեցուն ըլլալը:

Զ. Տետոն մերոյ Յիտուսի Քրիստոսի ամենօրհնեալ Առւրբ ԿՍԱ Մարիամայ Միածին որդին ըլլալը պիտի հաստատենք:

Է. Պիտի հաստատենք Հայաստանեայց Լուսաւորչական Եկեղեցւոյն իրաւունքները՝ ՚ի մասին Եպիսկոպոսաց ամուրիութեանը:

Ը. Գրքին անունը խարէտական ձեւ մը ըլլալը:

Թ. Հեղինակին անունը գրքին վրայ չի դտնուիլը՝ վախկոտութիւն և փախուստի ճտմբայ է:

Ժ. “Աիրելիներ՝ ամեն հոգիի մի հտւատաք, հապա՝ հոգիները փորձեցէք, թէ արդեօք Աստուծմէ<sup>թ</sup> են,,. Ա. Յովհ. Պ. 4, Պիտի հնազանդիմք Առաքեալին, (և ինչպէս որ յայտնի է յիշեալ Առաքելական խօսքը իւր գրքին նախադուռին վրայ դնելովը) և հեղինակին փափաքին, և պիտի փորձենք թէ “արդեօք Ամերիկացի Քարողիչները (որոնք հոս են) Աստուծմէ<sup>թ</sup> են,,:

Այս առթիւ մեր ներկայ աշխատութեան ընթացքին մէջ պիտի յայտնենք մեր սիրելի Ազգայնոց (մանաւանդ անոնց որ իրենց մայրենի եկեղեցին դուրս ելած են) թէ որչափ մոլորած և շեղած են Ամերիկացի Երիցական Միսիօնարք սուրբ Գիրքէն ՚ի մասին Քրիստոնէական մէկ քանի էական և կարևոր սկզբմանց. և մասնաւորապէս մէկ քանի ասլացոյցներով պիտի յայտնենք անոնց միտումը անկրօնութեան: Յ. այս ամենէն վերջը մեր կողմանէ մասնաւոր հրաւեր սիրոյ մըն ալ պիտի նուիրենք մեր այն արիւնակից եղբայրներնու համար, որոնք հիմա մեղմէ օտարացեալ են:

Ա. Հա մեր աշխատութիւնը այս տասը մասնաւոր դիտողութեանց վրայ պիտի ըլլայ դրւշանալով, որ մեր իրաւունքէն առաւել նախատինքով չի հարուածենք մեր քննութեան առած գործին հեղինակը, վասն զի՞ ինչպէս որ կ'ըսէ ինք, “այսչափս ընելը ոչ միայն մեր անհակառակելի իրաւունքն է, այլ և մեր յայտնի պարտականութիւնը,,”

# ՄԵԾ ԵՒ ՆՈՐ ԸՆԵՑԻՍ

Ահա ԲԱՐԻ ՄԱՐԴԸ՝ որուն ակնասլիշ կ'սպասէինք  
վերջապէս եկաւ, բայց շիտակը խօսելով երանի թէ  
բնաւ չի գար, եւ մեր բոլոր ակնկալութիւնները ՚ի  
դերեւ չելլէին: Մենք ալ կը յուսայինք որ Աստու  
գոմորներնուս մէջ, վերջապէս բարի մարդ մը պիտի  
գտնուի՛ զմեղ ճղակտոր ըլլալէն աղատելու. բայց ա-  
ւա՞ղ որ յոյսերնիս պարապ ելաւ, եւ վստահութիւն-  
նիս ցնղեցաւ. ո՞վ կրնար յուսալ բնաւ, որ ԲԱՐԻ ՄԱՐԴ  
ուն տեղ նորատեսիլ ձիւաղ մը, գլխունուս վրայ պի-  
տի իյնայ. . . ի՞նչ ընենք. . . ճակատագրնիս անիծեալ  
ըլլայ. ո՞ր յուսացածնիս ձեռուընիս անցաւ. ո՞ր բաղ-  
ձանքնիս կտտարուեցաւ, «Աղբիւրն երթանք կը չոր-  
նայ»: Ահա այս է թշուառ Հայոց առաջին եւ վերջին  
ճակատաղիրը: Ժառանդորդ անմեղ մանկան նման ա-  
մեն կողմերնիս զմեղ լզող լզուըոտըկող շողոքորթներ  
չեն պակսիր. . . Ամէն. . . թո՞ղ չի ոլակսին. բայց այս  
ալ թող գիտնան, որ ասկից վերջը իրենց բաժինը  
Կըկոիկեան կից մըն է: Ողորմելիներ. . . չեն գիտեր  
ընսւ՝ որ Հայոց Աղդը խաբուելով խաբուելով վերջապէս  
ճանչցաւ զինքը խաբուները, իրեն թակարթ լարուները,  
ճիղուիժները, եւ ամեն տեսակ ձիղուիժութիւնները,  
շողոքորթները՝ պատակտիչները, եւայն: Եւ յիրաւի  
ալ չեն ոլակսիր իրեն համար այնպիսիներ, որոնք ա-  
շաշուջ պահանջորդոթեամբ թշնամույն դէպ ՚ի իրենց  
ուղղած առաջին շարժումը անդամ կրնան նշմարել. եւ  
եթէ երբէք ինքը լինի կոյր կը ձեւացընեն, մինչեւ

## ԺԲ

որ մօռենայ թշնամին, զայն յանկարծ եւ անյուտաւի կերպով, ոմբակոծելու, հաղածելու, ետեւէն սրտաբուղիս ռհան, հահ» մը հնչեցընելու եւ անոր ծաղրավի փախուստվը ինքը զինքը զուարձացընելու համար է:

«Առջին նայողին զգուշացիր, ո՞րդեակ իմ» կ'ըսեն մեղի մեր պարզամիտ մամերը։ Այո մամեր պես կը կենանք, եւ ալ բնաւ չենք խաղուիր ամեն անոնցքն սրոնք ծիծաղաշարժ կիրպարանքով, ձեռուընին Աւետարան մը բանած կը մօռենան մեղի եւ ամեն կարելի եղած միջոցով մեր համակրութիւնը իրենց վրայ դարձրնել կուղեն-որով կարենան մեկ ձեռքովին կը նաև շոյելու, եւ միւսովնին իրենց արխանարուդաշոյնին խոր սրտերնուս մեջ խօթելու։ Ե՞ն մինչեւ ե՞րբ Հայոց Ազգը այս տեսակ էակներուն ենթակայ սկսի ըլլայ . . . :

Մարդիկ, ի՞նչ կ'ուզէք մեղմէ։ ի՞նչ առնելիք կամ տալիք. գացէք, հեռացէ՛ք՝ ի սերն մեծ Պասկերնուդ, եւ ձգեցէ՛ք՝ քիչ մըն ալ հանդչինք։ Ճանձրացանք ձեղմէ. գլուխնիւս ոռեցուցիք. ի՞նչ կ'ուզէք մեղմէ. Քրիստոս մնդի ճանչցընել կ'ուզէք, բարի. բայց ականջ ունիք նէ լուցէք. մենք զայն ճանչցեր ենք. զինքը կը սիրենք, եւ մեր անձերուն վր'լութիւնը մրայն իրմով կը յուսանք. . . : Բայց դոք չէք լոէր. չէք հանողուիր. լոէք, համոզոիք ալ նէ՝ բաներնուդ չի գար. դոք կ'ուզէք որ մենք մեր հաւատացածը չի հաւատացած ըլլանք, եւ Քրիստոնէութիւնը ձեղմէ. սորվելու գանք. զարմանալի՛. . . : Ի՞նչ անօրինակ եւ խակ ճիզուիթութիւն. ի՞նչ ծաղրելի դիմակա-

արութիւն. . . .

Սուրբ Գիրքը, Աստվածաշունչ սրատգամը, Հին  
եւ Նոր Կոտկարանը՝ մեղի կարդացրնել կողէք, դո-  
վելի բարեկամութիւն. բայց եթէ չէք վախչըտիր, եկէք  
եւ մեր Եկեղեցիները մտէ՛ք, եւ ուսէք որ Սուրբ Գիրքը  
մէկ ծայրէն մինչեւ միւս ծայրը, ամեն տարի, Յուն-  
ուարի առաջին օրէն, մինչեւ Գեղարքունիքի վերջին օրը  
կը կարդացուի. ամենառաջ համար. ամենառաջ համար. ամենառաջ հա-  
մար. Եւ ան ալ զրեթէ հաղար եղելք հարիւր սարիւ-  
հետէ,

«Կը կարդաք այս, բայց չէք հաս՝ լընալ» . ատ ո՞վ կը լ-  
իցուց ձեղի. . . տարակոյս չի կայ որ ձեղի հարով ու-  
միկներէն\* լսած ըլլալու էք. . . վո՞յ հովիներնուն, որ  
դեռ իրենց Մայրենի լեզուն չի սորված՝ օտարին քա-  
րողածին կը յարին, եւ իրենց տղիստութեանը մասնա-  
կից կը կարծեն ամեն համալրիներնին. ատ մարդոյ  
դեռ Լուսաւորչական չեղած, Երիցական\*\* ըլլալը որ-  
շափ որ զարմանալի է, այնուշտի ալ ծիծառիւի են ասոնց  
խօսքին հաւասարողները»

— «Աւետարանին շեղած էք» կը զրապարուէք. ինչ-  
պէս վերջը պիտի հաստատենք. բայց եթէ ասոնկ ալ ըլ-  
լայ, ձեղի<sup>3</sup> ինչ. Աւետարանը առջեւնիս չէ<sup>4</sup> մի. ուրեմն  
ինչ հարկ ունինք ձեղի պէս օտարական, ամսկայա-  
կան, ինքնակոչ կրօնի եւ Սուրբ Գրոց վարդապետներու»  
— «Մենք պիտի քարոզենք, կ'ուղէք նէ մտիկ ը-

\*Մէկ ժամկ և առաջ համար է խօսք:

\*\*Երիցական Ավելցու անունը առնի, հստ բարեկամ Ամերիացի Մե-  
սիօնաբաց Ավելցուն, որն ար Սուրբ Գրոց հակառակ վարդապետու-  
թեամբ՝ Սովորիստան շին ընդուանէց:

քէքն. Քարողեցէ՛ք ուրեմն հա ձեզ տեսնեմ. բայց  
աղէ՛ միայն ձեզ պիտի տեսնեմ. սակայն ոչ ձեզի մոխել  
ընողներ. Եւ շատ յուսադի է որ՝ բուն ձեզի հարողներ-  
ը ալ զձեղ եւ ձեր քարողութիւնը մոխել ընել սլի-  
տի չուզեն, հետեւելով Սեբաստիոյ Հայ Երիցակա-  
նաց, որոնք միաբան որոշեցին ալ եւս իրենց միախօ-  
նարին քարողը մոխել չընել\*: Այո՛, յուսադի է ասխեայ-  
վան զի արդէն ամեն Հայ Երիցականները սս մար-  
դոյժէ ինչ որ լսելիք եւ սորվելիք ունեին նէ լսեցին եւ սորվեցան. Եւ ալ կարօտ չեն անոնց, մա-  
նաւանդ որ իրենց ճանձրութիւնն է միշտ նոյնը լսել  
նոյնը սորվիլ. Խակ Պատուելիք՝ անոնց ինչ որ խնա-  
ցընելիք, ճանչցընելիք ունեին նէ խնացուցին, եւ  
ճանչցուցին. ուրեմն հոս ուրիշ ալ ի՞նչ լսելիք ունին  
ելեն երթան նէ աղէկ չը լլար: Մեջէ Առաքեալք  
իրենց գայած եւ քարողած տեղերը կը խոռեին եւ  
կը մնային:

Բայց մենք բուն մեր նպատակին դանք. այսին-  
քըն անաշառութեամբ քննելու այս օրերս հրատա-  
րակուած ԲԱՐԻ ՄԱՐԴ ԵՒ ԲԱՐԻ ԳՐԻՍՏՈՆԵԱՅ ա-  
նուն զիրքը 1860, Տպեալ ՚ի Տպօրանի Յ. Փախադ-  
եան. Վէլիր խան:

Մենք սլխոի քննենք դայն՝ այս, ամենայն իրա-  
ւասիրութեամբ հասկընալու համար թէ՝ իրօք բարի  
մարդ մըն չէ, թէ է Բարի Մարդու դիմակով չար-  
մարդ մը, այսինքն Միսիօնարական նորահնար ճիղ-  
ուիթութիւն մը, կամ նոր թակարդ մը:

\*Այս անցու ամեն իերուակ էու եւ եւած առեն ուշուածութեամբ:

# ՄԱՍՆ ԱԹԱԳԻՒՅ

## ՅՈՂՈՒԱԾ Ա.

Գրքին պարունակած անվայել նախատիմքները՝  
թէ իբր մարդ, եւ թէ իբր Քրիստոնեայ:

“Թէ ոք բարձրանալով յիմարութիւն  
ըրիր, կամ մեկ չարութիւն մը մտածե-  
ցիր, ՅԵՒԴԻ ԲԵՐՆԻՇ ՀԵԿ ԴԵՐ,,:

Առ. Առակ. 1. 22.

## Ի Բ Բ Ս Ա Ր Դ

“Չեռքդ բերնիդ վրայ դի՛ր,, . ահա այս-  
պէս կը հրամայէ հանճարեղին պատղամախօսը,  
Սողոմոնը՝ այն երեւելի Փիլիսոփան, որուն ամեն  
մէկ պատղամները՝ իմաստունը մարդկութեան  
կ'առաջնորդեն, և խաղաղութեան կը տանին,  
“իմաստունը թողլսէ՛, և իր իմաստութիւնը  
աւելցընէ, և հանճարեղ մարդը խոհեմութիւն  
ստանայ,, : Ե՞սուի ։ Ե, ։ Յ, ։ Խակ յիմարնելը կը  
խորշին անոր պատղամներէն, և իրենց յիմա-  
րութեանը մէջ յամառ կը մնան: “Բայց յիմար-  
ները իմաստութիւնը ու կըթութիւնը կ'անար-  
գեն,, : Ե՞սուի ։ Ե, ։ Յ, ։

“Չեռքդ բերնիդ վրայ դի՛ր,, . բայց ի՞ն-  
ըսել կ'ուզէ “Խաւթի որդին իւր այս պատղա-  
մովը ։ ի՞նչ ընենք, բանելնիս գործերնիս ձը-  
գենք և ձեռուընիս բերաննուս վրայ դնենք»

Եթէ այս է իւր նպատակը՝ յայտնապէս ինքը  
 իմաստուն մը չէ . և մենք սխալած եմք . . . բայց  
 չէ . ոչ մենք սխալած եմք , և ոչ ալ Սողոմոն  
 անիմաստ պատգամախոս մըն է . այլ այս պատ-  
 գամովը յայտնապէս կը յանդիմանէ ամեն անոնք՝  
 որոնք մեր պատուելին պէս տմարդաբար դուքս  
 կը տեղացընեն իրենց բերնեն Ճոխ նախատինք  
 ներ . երբ մէկը իրենց ջղին դպչէ , կամ յան-  
 դիմանէ զիրենք իրենց ապաշնորհ ընթացքնե-  
 րուն համար . . . “ Զեռքդ բերնիդ վըայ  
 դի՛ր , ” ահա այսպէս կը հրամայէ Սողոմոն . ո՛  
 Տէրոջը պատգամին Սուրբ Պարոյ համարձակ  
 քարողիչները . որչափ որ մեղի , այնչափ ալ ձե-  
 զի կը հրամայէ որ ձեռուընիս բերաննուն  
 վրայ դնենք . այսինքն՝ զսպենք լեզունիս , որ  
 չըլայ թէ սրտերնուս բարկութեամբը մեղան-  
 չենք . “ Արկանայք և մի՛ մեղանչէք , ” կ'ըսէ  
 Պատիժ . և անոր համեմատ է նաևս մարդ-  
 կութեան օրէնքը . ո՞վ կընայ ուրանալ որ ամե-  
 նէն իմաստուն մարդն անդամ եթէ չի դիտեր  
 իւր լեզուն սանձել , և իւր հակառակորդին  
 վրայ նախատինք չի տեղացընել յանկարեւորս ,  
 յիմար մըն է . և իւր բոլոր հմտութիւնները  
 ունայն են . . . “ Վատուծոյ պատգամը բաց ’ի  
 Քրիստոնէութենէն , և անթիւ ուրիշ օդաս-  
 էտ ուսումներէն , կը կըթէ զմեղ մարդկու-

թեան օրէնքներուն մէջ, որ կարենամբ սա կարծ  
և դժնդակ կեանքը կարելի եղածին չափ խա-  
ղաղութեամբ անցընելու, զարմանք, կատարեալ  
մարտ ըլլալը որքան դժուար է տարդուս . . . .

Խնչպէս որ Աստուծոյ խօսքը՝ նոյնպէս ալ  
բնութիւնը այս դասը ամենուն կուտայ, տեսէք  
Երեգին առատաշնորհութիւնը, որ օր մը իւր  
լոյսը չի զրկեր Լուսինէն, քանի որ անկէց փո-  
խարէն մը չի սպասեր, միթէ այս մեզի առատա-  
ձեռն ըլլալ չուսուցաներ, ասկից առաւելթո-  
շակաւոր Լուսինը, իւր ուրիշէն առօրեայ ա-  
ռած լոյսը չի խնայեր Երկիրէս, այլ զայն քաղց-  
րութեամբ կը նուիրէ անոր . . . , սէր անփոխա-  
դարձ . . . : Գիլտըն այս սէրը մարդկային ձեղին  
վրայ չի գտներ . . . նախատինք, անվայել մար-  
դուս համար, մարդս զմարդս նախատել, ի՞նչ  
արտաքոյ բնութեան ընթացք, նման զնման նա-  
խատել, ի՞նչ տմարդութիւն, յիրաւի եթէ Ա-  
րեգակ մըն ալըլլար մեր նորօրինակ Պատուելին,  
տակաւին ինքը ամենևին նախատելու իրաւունք  
չունէր և չունի, Լուսինը՝ որն որ զինքը ոչ  
թէ միայն կը հալածէ, այլ իրաւամբ չուզեր  
զինքը շրջապատող և իրեն սեպհական հանպի-  
սատեսը եղող աստղերուն մէկ հատը անդամ  
կորսնցընել. Ե՞րբ նախատեց Արփին, լուսնին  
այս ընթացքը, և ե՞րբ անոր աստղիկներէն մէ-



կը անոր ձեռքին առաւ, և կամ ե՞րբ անոր դէմ  
 իւր բարեկամութիւնը դադրեցուց ։ բայց չէ,  
 դուք Լուսին եք, և Արեգին ճառագայթները  
 կ'ուղեք ձեզի սեպհականել ։ կը նախանձիք անոր  
 դէմ, և դոնիւ տարին անգամ մը երեսնիդ անկից  
 կը ծածկեք ։ ձեր թշնամութիւնը կը յայտնէք ։  
 բայց աւազով որ անլոյս կը մնաք, ինչպէս որ Լու-  
 սինը կը խաւարի երբ նախատելով Արփւոյն լոյ-  
 սը ինքը ինքը երկրիս ետելը կը ծածկէ ։ ասանկ  
 դուք որ ամեն ձեր կարեւորութիւնները մեզմէ  
 կ'ընդունիք, (դուք ձեր Վրիստոնեւութիւնը և  
 անոր վերաբերեալ ամեն կարեւորութիւն-  
 ները արեւելեան Վրիստոնեայ Ազգերէն  
 ընդունած էք), պիտի միշտ խաւարիք քա-  
 նի որ ապերախտաքար մեզի դէմ դառնաք,  
 և զմեզ նախատէք ։ իսկ ընդհանուր Աշխարհս  
 պարտի ծիծաղիլ ձեր վրայ, մեզմէ ընդունած  
 լոյսերնիդ մեզի նուիրելու ջանքերնուդ հա-  
 մար ։ ասիկայ յիմար նախանձ մըն է, որ Լուսինը  
 երբէք չի յանդգնեցաւ վորձելու . . . ։ Բայց ձեր  
 պարտականութիւնը դիտէք ի՞նչ է ։ դուք պար-  
 տիք մեզմէ ընդունած լոյսերնիդ անլոյս աշ-  
 խարհներուն նուիրէք ։ ինչպէս որ Լուսինը Ա-  
 րեգէն ընդունած լոյսը, անթիւ անլոյս Աշ-  
 խարհաց կը նուիրէ . . . ։ Ահա այսպէս իմաս-  
 տունը պարտի վարուիլ այս Աշխարհիս մէջ . . .

Ի՞նչ կ'ըսես Պատուելի . քու և քու ընկերներու ընթացքը ասոր հակառակ չէ՞ մի . Անվայնել ապօրինաւոր և մարդկութեան դեմ չէ՞ ձեր այս տարօրինակ նախատինքները , որոնք այդպիսի առաջարկութեամբ կուտելու կը յանդգնիք Առաքելաշաւիդ այրապետի մը վրայ . միթե յիմար մը ասկից աւելի յիմարութիւն կրնայ մի ընել . ուր էիք դուք երբ մեք Արևելքցիք երկնային լոյսը ընդունեցինք . ուր էիք դուք երբ Աստուածային բարեգթութիւնը բարեհաճեցաւ համաստեղական Արևին սահմանակից ընել Վրիստոնեական ճաճանչափիւու Արփին . որմէ ընդունեցիք ձեր լոյսը՝ կը հարցընեմ ձեզ , որմէ ընդունեցիք Վրիստոնեութիւնը . որմէ կենաց առաջնորդ . Աստուածաշունչ պատգամը , ըսէք ինձ , ո՛ Արևմտեան խաւարաբնակներ . որ կողմէն ծագեց ձեր վրայ այս կենաւրար Արեգը . վերջապէս պատմեցէք ինձ ո՛ մթին լուսիններ , ձեր լոյսը որմէ ընդունածէք , կ'ամչնաք պատասխանելու . ես ձեր տեղը կը զբուցեմ . . . Դուք երեսնիդ քիչ մը ծածկեցէք . . . Արևելքէն , մեզմէ . . . քիչ պարծանք չէ այս մեզի համար . բայց ամօթ ամեն անոնց , որոնք գիշերուան թագիեն ընդունած յանդիմանութիւննին չի լսելով , տմարդաբար մեզմէ ընդունած լոյսերնին փոխանակ անլոյս ԱՀՀ

խարհներու շնորհելու՝, չեմ գիտեր ի՞նչ խելար  
 սկզբունքով դարձեալ կը ջանան զայն մեզի շը-  
 նորհել. մեզի՞ որ մեր լոյսը իրենց շնորհելով,  
 Երեղի նման լոյսերնիս չենք կորսնցուցած. և  
 Ճիշդ նոյնն եմք ամեն կերպով, ինչպէս որ էինք  
 տասներեք դար առաջ. Հիմայ ինչպէս որ ենք,  
 Ճիշդ այնպէս էինք ան ժամանակը երբ մեր լոյ-  
 սը ձեզի շնորհեցինք. Բայց դուք ոչ թէ միայն  
 յիմարութիւն կ'ընէք, այլ և յամառութիւն,  
 և ասկէց աւելի վատ՝ զմեզ անլոյս կը կարծէք.  
 Ի՞նչ, միթէ մեր լոյսը ձեզի տուած ըլլալովնիս  
 կը կարծէք որ մենք լոյսէ զրկուեցանք. և ա-  
 սոր համար ուզելով որ երախտագիտութիւննիդ  
 մեզի յայտնէք. կ'ուզէք առած կամ ընդունած  
 լոյսերնիդ մեզի դարձընել. աղէ՛. եթէ մենք  
 մեր լոյսը ձեզի տալով լոյսէն զրկուեցանք նէ,  
 չէք վախնար որ դուք ալ նորէն զայն մեզի դար-  
 ձընելով, ձեր առջի մթութեանը մէջ սկիտի  
 բանտարգուիք. ի՞նչ անձնուրաց երախտագիտու-  
 թիւն...: Բայց ձեր վատութիւնը անկրելի է,  
 ո՛ ապերախտներ, վասն զի կը նախատէք զԱյն,  
 որուն նախնիքները զձեզ խաւարին մէջէն հա-  
 նեցին. ասիկայ ապիրատութիւն չէ մի. « վար-  
 պետ գողը ստայուածքին Տէրը կախել կուտայ ո  
 կ'ըսէ առածը, ձեր ընթացքն ալ այս չէ մի.  
 Դուք եկեր Վազգը կը կողոպտէք և կ'պառակտէք! »

երբ Աղջին տէրը կ'ելէ և զձեղ գող կ'անուանէ, մէկէն կը կատղիք և ձեր պատիւը փնտըռելու համար զայն դատաստանի կը հրաւիրէք և առանց ամչնալու, Անոր իրաւացի նախատանացը, (մարդկօրէն խօսելով), և իւր զաւկըները կորսնցնելով սրովին ցաւէն առ ձեզ ցուցուցած զայրութին փոխանակ, կ'ելէք և զայն կը յանդիմանէք, կը նախատէք և այն. ՚ի սէրն Աստուծոյ ո՞ր կառավարութեան, ո՞ր օրէնքին, և կսմ ի՞նչ տեսակ մարդկութեան համաձայն է այս ձեր բռնած ճանքան . . . . Իրաւ է որ կաթուղիկոսնիս զձեզ կը նախատէ. և չի նախատէ՞ մի. միթէ կոյր էք որ անոր իրաւունքները չեք տեսներ. միթէ Արեգը չե՞նախատեր, և նախատելու իրաւունք չունի՞ մի զլուսինը, երբ որ ան ելէ Արեգէն ընդունած լոյսը փոխանակ անլոյս երկիրներու տալու, իրեն դարձրնէ, և առանց ամչնալու ինքրզինքը իրաւացի հանէ ըսելով, “Դուն լոյս չունիս, դուն լոյսդ կորսնցուցած ես,, . միթէ Լուսինը յիմար չէ երբ իւր այսպիսի տմարդի ընթացքին համար Արեգակէն նախատուելով անոր դէմ կատղի և զայն նախատելու յանդգնի . . . . ՈՎԿընայ չեծիծաղել ձեր անմտութեանը վրայ ո՛լուսաւորեալ Պարոններ, ո՛քարեկարգեալ Աշխարհներուքաղաքացիներ, և ո՛կատարելութեան ուսումնա-

բաններու Աշակերտներ . . .

Ապօղիկոսը իւր հեղինակութեանը մէջ  
երբ որ զձեզ կը նախատէ՝ հեթանոս Ազգերը  
ձգելով Քրիստոնէից քրիստոնէութիւն քարո-  
ղենուդ համար, կը բարկանաք, և հետեւեալ  
անվայել խօսքերով զԱ, յն նախատելու կը յան-  
դրգնիք, “Դարձեալ կը պատասխանենք որ՝ եթէ  
մենք զՔրիստոս չե ճանչցողներուն Սուրբ Ա-  
ւետարանը քարողելու պարտականութիւննիս կը  
ճանչնանք՝ մեծ ուրախութիւն սկիտի համարինք  
մեղի Երժեպիսկոպոսին գոռանը երիտալ այս պաշտօնը հատա-  
րելու, եթէ մեղը ընդունել բարեհաջի,, (Երես 85):  
Անստորագրելի տմարդութիւն . . . Պարոններ  
եթէ զքեզ նախատող Ապօղիկոսը հեթանոս  
է, հապա դուք ի՞նչ եք . չէ՞ որ այս Ապօղիկո-  
սին նման հեթանոս (ըստ ձեր կարծեաց) Ապ-  
օղիկոսներէ ընդունեցիք ձեր Քրիստոնէու-  
թիւնը . արդ եթէ անոնք հեթանոս էին, դուք  
Քրիստոնէայ չեք կրնար ըլլալ . . . Եթէ իր-  
մածնիդ ջուր է, դինով չեք կրնար ըլլալ . . .  
Լուսինը ձեզմէ շատ աւելի խելացի է . Լու-  
սինը թող զձեզ յանդիմանէ, և երանի թէա-  
նոր յանդիմանութիւնը աղդէր սրտերնուդ, որ  
կարենայիք ուղիղ դատողութեամբ հասկընալու  
որ (ինչպէս որ մեր Արքազնասուրբ Ապօղ-  
իկոսը ըսած է), տմարդութիւն է նախատել

զայն որն որ իրաւամբ զձեղ կը նախատէ , և ձեր  
 ապօրինաւոր ընթացքը առջևնիդ դնելով , կը  
 յորդորէ զձեղ որ ձեր ընդունած լոյսը փոխա-  
 նակ առած տեղերնուդ դարձրնելու , անլոյս Աղ-  
 գաց վրայ ցոլացընէք . Երանի թէ դուք ճանչ-  
 նայիք ձեր այս պարագը , և փոխանակ նախա-  
 տինք ըլլալու Քրիստոնէութեան , անոր պար-  
 ծանքը ըլլայիք : Դարձեալ աւելի տմարդի յան-  
 դրգնութեամբ կը հարցընէք , “ Արդ կը հար-  
 ցընենք Արքեպիսկոպոսին թէ՝ ինքնի՞նչ ըսեր է  
 հեթանոսաց համար մինչև հիմայ : Սուրբ Ա-  
 ւետարան քարողած է անոնց , ” (Եշես 84) . զբա-  
 ռւելի ապերախտութիւն , կը հարցընեմ ուրեմն  
 ձեզ , հապա դուք Քրիստոնէութիւնը ուրկից  
 լսեցիք և ընդունեցիք . չէ՞ որ այս ձեր այսպիսի  
 կերպով նախատած Ասթուղիկոսին յաջորդնե-  
 րէն , դուք որ շատ չըներ հեթանոսութիւնը  
 թողուցիք . Քրիստոնէութիւնը ուրկից ընդու-  
 նեցիք . ձեր հայրերէն . անո՞նք որմէ , իրենց  
 հայրերէն , և անո՞նք իրենց հայրերէն , անո՞նք  
 ալ Արեւելքէն , Արեւելքէն , Արեւելեան Քր-  
 իստոնեաներէն , Հունաց , Հայոց Եկեղե-  
 ցիներէն . կընա՞ք մի այս ուրանալ . եթէ ոչ , ու-  
 րեմնի՞նչպէս կը յանդիմանէք , կը նախատէք այն ,  
 որուն նախնիքը յարմար պատեհութիւններ ու-  
 նենալով ձեզի պէս հեթանոսներու կենաց խօս-

քը խրկեցին, Վրիստոնէութիւնը ձեզի քարո  
 զեցին, և կենաց ճանբան ձեզի ցուցունելով  
 զձեզ խաւարապատ հեթանոսութենէ աղառե  
 ցին . . . Ի՞այց կը հարցընէք, “ինչու այս Արք  
 եպիսկոպոսը այդ մասին իրեն նախնեացը չի  
 հետեւիր . . և ինչպէս հետեւի. “բարեգործու  
 թիւնը իւր տունէն կ'սկըսի . . ինքը այնչափ  
 գործ ունի իւր Ազգին համար, որ հազիւ իւր  
 ժամանակը կը բաւէ. “ամեն մարդ իւր կարո  
 ղութեանը համեմատ պարտի գործել,, “ան որ  
 կ'ընէ, ինչ որ իւր պարագաները կը ներէ աղէկ  
 կ'ընէ, աղնուութեամբ կը գործէ, հրեշտակնե  
 րը ասկից առաւել չի կրնար ընել,, կ'ըսէ Եռունկ  
 իմաստասէր. արդ կը հարցընեմ ձեզի. մեր Ա  
 թուղիկոսը և մեր Ազգը այս մասին ի՞նչ կրնան  
 ընել. իւր ներկայ պարագաներուն դուք ան  
 տեղեակ չեք, կառավարութիւն մի ունի. հա  
 րսուութիւն մի ունի. զօրաւոր ընկերութիւն  
 նե՞ր մի ունի, իւր կարողութիւնները ինքը ին  
 քին կը բաւէ՞ մի. մարդիկ . ի՞նչպէս կրնաք այս  
 պիսի խելացնոր յանդիմանութեամբ նախատել  
 զմեզ և մեր Աթուղիկոսը, մեզ՝ որ հազիւ  
 շունչ առնելսկըսանք, Յիսուսի Վրիստոսի փա  
 ռաւոր դրոշակին պաշտպանութեանը համար  
 կրած հալածանքներնուս. չեք լսած որ մենք  
 այերս Աշխարհիս ամենքանէն զրկուած մնա

ցինք կենաց խօսքը չե կորսնցընելու համար, ինչու կորսնցուցինք թագաւորութիւննիս, զահերնիս, թագերնիս, հայրենիքնիս, և երկրային ամեն հարստութիւննիս. Եթէ ոչ 'ի փառս Քրիստոսի, որն որ մեր յոյսը, մեր ապաւինութիւնը, մեր թագաւորութիւնը, մեր գահը, մեր թագը, մեր հայրենիքը, և մեր երկնային երջանկութիւնն է. շատ աժան գնեցինք մենք զինքը՝ և երբէք դժողոհ չենք . . . : Այց Աստուած զմեզ մսիթարեց, և երբ մենք զՔրիստոս և իւր Սուրբ խօսքը գրկած հալածեալ կը շրջէինք անապատներու և ամայի լեռները, մերկ և անօթի ամեն բան կորսնցուցած. ահա 'ի գութ շարժեց (Օսմանեան կառավարութիւնը որն որ ինչպէս այս մօտերս Զէչէններուն, անանկ ալ իւր կուրծքը բացաւ մեզի, ինամեց զմեզ, և դեռ կը ինամէ . . . : Աստուած ալ զինքը ինամէ . . . :

Ո՛ՎԱՇԽարհ, լսելու եկէք, և ըսէք սա Ամերիկացի Պարոնները իրաւունք ունին մի մեզի հարցընելով նախատելու, թէ մենք ինչու Քրիստոնէութիւնը հեթանոսաց չենք քարազեր . . . : Անիրաւ, անվայել, ապօրինաւ որ և մասնաւորապէս տմարդի հարցում մը չէ աս. և իրաւունք չի տար մեզի հարցընելու իրենց թէ՝ իրենք պիտի որ մը, լոկ որ մը ԿՔրիստոնէու-

թիւն քարոզելու պիտի ելէի՞ն եթէ մեր վիճակին մէջ գտնուեին, և զիրենք կշտացընողներ չունենային. և դարձեալ մեր Կաթուղիկոսը իրաւունք չունի՝ հարցընելով զանոնք նախատելու, ըսելով թէ՝ ինչու հեթանոսաց չեն քարոզեր, քանի որ ամեն զօրաւոր միջոցներ ունին. ինչու թողուցեր են անթիւ հեթանոս Աղդեր և եկեր Վրիստոնէութիւնը դառնութեամբ գնող և ընդունող, և երբեմն (երբ պատեհութիւն ուներ) հեթանոսաց քարոզող Աղդի մը Վրիստոնէութիւն կը քարոզեն, և կամ աւելի ինչու չեն երթար բուն իրենց երկիրը և հոն քարոզեր, հոն ուր գերիավաճառական ամեհի հեթանոսութիւնը դեռ շատ քարոզիչնելու կարօտ է. ՃԵՐՄԱԿ ԳԵՐԻՒ ԵՒ ՆԻՒ ԵՕՐՔԻ ԹՇՈՒՍՈՒԹԻՒՆԵՐՈՒ հեղինակները զերենք շարունակ կը հրաւիրեն և կ'իմացընեն իրենց, որ հեթանոսութիւնը դեռ անկից վերցուած չէ. . . . Ուրիշներու վայ գութ ունենալ կը յուսացուի՝ ամեն անոնցմէ՝ որ նախինքը զինքնին չեն զթար. . . . Վ անփոյթ մարդիկ, կարեկցութեան շարժեցէք, և ձեր երկիրը դարձէք, ուր ձեր հայրենակիցներուն մէկ մար հեթանոսական բարբարոսութեամբ, առանց ականջ կախելու երկրին կառավարութեանը թախանձանացը, և մասնաւոր բարեսիրտ անձանց

ջանքերուն, իբր անբան կենդանիներ՝ ճղակտոր  
 կ'ընեն խեղճուկ սեւերը, որոնք արիւնախառն  
 արտասուքով չեն կրնար չանիծել իրենց ծնուն-  
 դը. 'ի սէրն Աստուծոյ ո՛ Պատուելիներ, 'ի սէրն  
 տիեզերաց Արարչին շտապեցէք, օդնութե հա-  
 սէք ձեր երկրին և սեւերուն. աշխատեցէք վեր-  
 ցընել այսպիսի նախատինք մը ձեր հայրենեացը  
 վրայէն. աշխատեցէք ազատել սեւերը իրենց տա-  
 ռապանքէն, գթութեան և կարեկցութեան  
 շարժեցէք՝ անոնց տէրերը, ՅՀԵԿառնէունիւնը անոնց  
 ժարողէցէտ, և ժարողէցէտ այն 'Ի՞ր ։ Արոնիունաց ժարողէնէրուն,  
 որոնք գերե իւ պահեն. այն ժարողինէրուն՝ արանք Ալիւ-  
 նի օրերը մինչ անդամ իրենց գերենէրուն հանգստունիւն չեն  
 օբար. . . . Ո՞հ եթէ դուք այս մասին անզգայ էք,  
 մենք ալ բնաւ չենք կրնար հաւատալ որ դուք  
 կրնաք ուրիշ Ազգաց վրայ զգացում ունենալ.  
 Պատուարժան քարեկամներէս մէկը կը խնդ-  
 րէ ինձմէ, որ հարցընեմ ձեզ, թէ ։ Ո՞քան  
 ստակ խարճուածէ այս քառասուն տարիներուն  
 միջոցը Վրիստոնէութիւնը Տաճկաստանի մէջ  
 կայերուն քարոզելու համար ։ Ի. այն խար-  
 ճուած գումարով քանի՞ գերի կրնայիք գնել,  
 և ազատել. Դ. եթէ այսպէս ընէիք, յայտնա-  
 պէս կայոց Ազգէն Երիցական եղողներուն թի-  
 ւէն առաւել անոնց խումբը չե՞ պիտի ըլլար.  
 արդ՝ Դ. անոնք ան ժամանակը որքան սիրով

պիտի մոխկ ընէին ձերքարովութիւնը • և դուք  
 ասանկով, թէ բոլորովին հեծանոսները Քրիս-  
 տոնեայ ըրած պիտի չըլայիք և երկրորդ զանոնք  
 աղատելով կրկնակի առաքինութեան տէր պիտի  
 չըլայիք • և երրորդ Հայոց Երիցականներէն ա-  
 ռաւել թիւով հոգիներ չի պիտի փրկէիք . . .  
 Քարեկամիս առ Հարցումները թող արթուրը  
 նեն ձեզ • եւ ձեզ խրկող Պօրտ ընկերութիւնը,  
 որ ճանչնաք ձեր անհրաժեշտ պարտականու-  
 թիւնը • Մենք այս մասիս մէջ մեր նպատակէն  
 շատ շեղեցանք, բայց ներելի է անշուշտ, ին-  
 չու որ խօսքերնուս կարգը զմեզ ստիպեց • Արդ  
 կը Հարցընեմ ամեն անաչառ և Ճշմարտախնդիր  
 անձանց թէ՝ Ի. • մեր Արթուրիկոսը իրաւունք  
 չունէր այդպիսի անձինքը նախատելու, յանդի-  
 մանելու, և այն • Ի. • իրաւունք ունի՞ն մեր  
 Պատուելիները իբր մարդ դժգոհ ըլլալու Անոր  
 նախատանացը դէմ, և փոխադարձաբար զԱյն  
 նախատելու • թող իրաւասէրք քննեն մեր փաս-  
 տաբանութիւնները, և մենք այս մասին այս-  
 չափ խօսիլը բաւ կը սեպենք •

---

## ՅՈԴՈՒԱԾ ԵՐԿՐՈՐԴ

“Թէ որ մեկը զինքը կրօնասէք կը սեպէ, ու իր լեզուին սանձ չը դներ, հապա իր սիրտը կը խաբէ, անանկին կը քրօնափրութիւնը փուն է,, :

Յակոբ. Ա. 26:

### ԻԲՐ ՔՐԻՍՏՈՆԵԱՅ

Եղէկ չըլլա՞ր եթէ մեր Պատուելին իւր քարոզած Աւետարանը լաւ մը աչքէ անցընէ, և նկատէ թէ ինքը իրապէս Քրիստոնեայ կրօնասէր մըն է, լեզուին սանձ չի գնողին կրօնասիրութեանը փուժն է կ'ըսէ ՕԵԲԵԹԵԱՆՔ, պարոն Աւետարանի Քարոզիչ ԷՌԱԶՄԱՆ կ'ըսես Տէրոջը Առաքեալին պատգամին նայելով քու կրօնասիրութիւնդ կամ Քրիստոնէութիւնդ քանիի կը ծախսես, քանի որ չես՝ կրնաք սրտիդ սրտմտութիւնը ծածկել, և լեզուդ սանձարձակ կը ծըգես վայրենաբար յանդիմանելու նախատելու զԵՐ որուն յանձնուած է այսօր Հայատանեայց առաքելաշաւիդ Լուսաւորչական Երկեցին : “Սանձէ լեզուդ”, կը հրամայէ քեզի Սուրբ Աւետարանը իսկ դու որ Աւետարանի քարոզչի մը պէս կը պարծենաս, խուլ կ'ըլլաս անոր ծայնին, բանիդ չի գալուն համար, “շատ մի՛ տրտըրար մտի՛ր պարկը”, կ'ըսես ասիկայ Քրիստոնէու-

թիւն է մի . . . բայց պիտի ըսես “քու Ասթու-  
 ղիկոսդ զմեղ տասնապատիկ առաւել նախատած  
 է, ուրեմն ան ալ Քրիստոնեայի մը անվայել  
 ընթացքին մէջ գտնուած է . . . այո՛ բարեկամ, եւ-  
 թէ Ասթուղիկոսն ալ ձեզի նման անվկայագիր,  
 ինքնակոչ, առանց օրինաւոր յաջորդական ձեռ-  
 նադրութեամբ ձեղի նման լոկ պարզ Քրիստո-  
 նեայ մը ըլլար, և եթէ իւր յանդիմանած հա-  
 կառակորդը ամեն կերպիւ օրինաւոր պաշտօնեայ  
 մը ըլլար Քրիստոսի որ և իցէ մէկ եկեղեցւոյն,  
 ան ժամանակը ինքն ալ իւր այս ընթացքով  
 Քրիստոնէութեան անվայել ընթացքի մը մէջ  
 գտնուած պիտի ըլլար . բայց որովհետեւ ինքը  
 այսօր, վկայուած, ոչ ինքնակոչ՝ այլ Կոստուած-  
 ընտիր օրինաւոր յաջորդական ձեռնադրութեամբ  
 ձեռնադրուած Քրիստոսի եկեղեցւոյն մէկ Ե-  
 պիսկոպոսը, Եպիսկոպոսապետը, Եղբեալիսկոպո-  
 սը, Ասթուղիկոսը, Հայրապետն է . Քրիստոսի  
 Կռաքելոց նման ամեն իշխանութիւն ունի յանդի-  
 մանելու, սաստելու, ամեն անոնք՝ որոնք ձեղի  
 նման ոչխարի հագուստով, ծով և ցամաք ան-  
 ցած եկած մտած են իւր Քրիստոսաւանդ հօ-  
 տին մէջ և զայն պառակտելու սկըսած են . այո՛  
 Պատուելի, ինքը ոչ թէ միայն իշխանութիւն  
 ունի զձեղ յանդիմանելու, սաստելու (հասա-  
 բակօրէն նախատելու) այլ այսպէս ընելը իւր ան-

Հրաժեշտ պարտականութիւնն է. վասն զի ինքը  
Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի Առւրբն Թա-  
գես և Քարթուղիմես Առաքեալներուն յա-  
ջորդը ըլլալով, որ անոնք ալ Յիսուսի Քրիս-  
տոսի որ հրամայեց անոնց իրեն նմանող ըլլալու  
և իրեն պես “իմի ծնունդներ, կոչելու ամեն  
անոնք՝ որոնք ձեզի պես կը վարուին Տէրոջը և  
իւր ժողովուրդին հետ.”

Յուղա Տէրոջը Առաքեալը իւր ընդհան-  
րական թղթով յայտնապես կը ցուցընէ թէ՝ օ-  
րինաւոր Առաքեալ որչափ արտօնութիւն ունի  
կծու յանդիմանութիւններ, վայելու ածական-  
ներ տալու անոնց որ արժանի են. կարդա՛ իմ  
հետս ուրեմն իւր թղթին մէկ մասը և հա-  
մոզուէ՛ ըսածիս. “Նմանապես այս ցարութներն ալ  
մարմինը կը պղծեն, Տէրութիւնը է անարգեն, գո-  
տուուրներն ուշաւ կը դաշն. (քեզի պես) և այն և այն,,”  
Ասոնք ձեր սիրոյ խնձոյ քներուն մէջ արագեներ են,  
ու ձեզի հետ կերուխումի նստած ատեննին ա-  
ներներ երենց անյը կը իւրակեն, անվար ամուսը հազերէն  
աշուած, պատաղնին կորոնցուցած ծառածը, բեր+ զունեցող  
երկու անգամ մեւած, աշմացնին խոլուած, ԾՈՎՈՒ ԿԱՏ-  
ՂԱԾ ԱԼԻՔՆԵՐ որ երենց անյերուն ամուսին էր էրցւունեն,  
ՄՈԼՈՐԱԿԱՆ ԱՍՏՂԵՐ որոնց համար իստարին մէկը պահ-  
ածէ յա-իտեան,,. Առաքեալը այս խել մընախա-  
տական տիսողուները անոնց տալէն, և զանոնք

Աստուծոյ ահռելի յանդիմանութեանը յանձնել  
 էն վերջը կը շարունակէ “ անոնք որո՞նջունէր ու  
 որո՞նջունէր են , որոնք իրենց ցանկութիւններուն  
 համեմատ կ'երթան , և իրենց բերանները ամբարդառան  
 խօսելը իւ շրուցեն , (քեզի պէս) “ Եհ ՇԱՀԻ ՀԱ-  
 ՄԱՐ ԵԲԵՍՊԱՇՏՈՒԹԻՒՆ ԿԸՆԵՆ , Դարձեալ զա-  
 նոնք կը նախատէ ըսելով “ անոնք ինքը ինքնին  
 զատող շնչառներ են , որ հոգին չունին , : Պատ-  
 ուելի , արդեօք մէկ Ծռաքեալը միւսինքարողա-  
 ծին հակառակ կը գործէր , չէ՞ որ Յակոբոս Ծռ-  
 աքեալ կը պատուիրէ սանձել լեզուն . եթէ չէ ,  
 ստիպեալ չե՞մք մի ընդունելու որ Տէրոջը Ծռ-  
 աքեալները իշխանութիւն և պատութիւն  
 ունին ամեն կերպ ամեն տեսակ կծու յանդիմա-  
 նութիւններ տեղացընել այն ամենուն գլխուն ,  
 որոնք (ձեզի պէս) Կրիստոսի ընդհանրական ե-  
 կեղեցին կը պառակտեն . ապա ուրեմն մեր Ար-  
 քազնատուրք Կաթուղիկոսը իւր Ծռաքելական  
 իշխանութեամբը համարձակութիւն ունի , ձե-  
 զի այն ամեն տիտղոսները կամ մականունները  
 տալու որոնց իրաւամբ արժանի էք , “ անոնք որ  
 մեղք կը գործեն ամենուն առջելը յանդիմանէ .  
 Տէս. Ե. 20 , : “ Որ եթէ նորէն դամ , պիտի չի-  
 խնայեմ : Կորն. ԺԿ. 2—3 , : “ Որ չըլոյ թէ  
 երբոր դամ , սաստկութեամբ վարուիմ ան իշխա-  
 նանեանը համեմատ է Կորն. ԺԿ. 10 , : Ծռա պա-

պէս է Առաքեալի մը իշխանութիւնը և հետեւ  
ւարար յաջորդներուն։ Ի՞այց դուք որ ոչ Առաք-  
եալ մըն էք և ոչ յաջորդական ձեռնադրութեամբ  
ձեռնադրեալ։ այս ձեր նախատելու յանդիմա-  
նելու իշխանութիւնը ուսկից առիք, բայց դուք  
ինքը վիճակի ազատելու համար կ'ըսէք, “մենք  
Առաքելական յաջորդութիւն չենք ընդունիր,  
ամեն Քրիստոնեայ ազատ է քարոզելու։ ամեն  
Քրիստոնեայ քարոզիչ է, Առաքեալ է, Ե-  
պիսկոպոս է, հետեւաբար ամեն Քրիստոնեայ  
միևնոյն իշխանութիւնը ունին, և ազատ են  
Առաքելց չափ յանդիմանելու, սաստելու, և  
նախատելու,,։ Այս է ձեր ըսելիքը, ըսեցէք ու-  
րեմն և տեսէք թէ դուք այս մասին Սուրբ  
Գրիրքէն մոլորեալ չէք մի։”

Դուք Առաքելական յաջորդութիւն չեք  
ընդունիր, ուրեմն քննենք թէ Սուրբ Գրիրքը  
այդ մասին ի՞նչ կը յայտնէ մեզի։

“Հուտով մէկուն վրայ ձեռք չի դնես,, կը  
պատուիրէ Պողոս Առաքեալ Տիմոթէոսին։  
արդ կը հարցընեմ ձեզի, Պողոսի այս զգուշա-  
ցուցիչ պատուերը ունայն չէր եթէ ամեն մարդ  
ազատ ըլլար ըստ ձեր դրութեան Յիսուս  
Քրիստոսը քարոզելու, և անոր անուանը օրի-  
նաւոր քարոզիչը, կամ Քրիստոսի եկեղեցւոյ  
պաշտօնեայ ըլլարու առանց ձեռնադրութան։”

Եթէ հարկ չե կայ յաջորդական ձեռնադրութեան, Տիմոթէոսի ընդունած պատուելը ի՞նչ  
 արժէք կ'ունենայ. Միթէ Պօղոս ունայնաբան  
 պատուերատու մը ընել կ'ուզէք այս մասին. Դարձեալ՝ Պօղոս Առաքեալ որչափ որ առ Գաւ  
 զատացիս գրած թղթին առաջին գլխուն ա  
 ռաջին համարին մէջ կը պարձենայ, ոչ թէ մար  
 դոցմէ՝ այլ Աստուծմէ ընտրուած ըլլալուն հա  
 մար. «Պօղոս առաքեալ եղած՝ չէ թէ մարդոց  
 մէ ու չէ թէ մարդու ձեռքով, հապա Յիսուս  
 Քրիստոսի ձեռքով» . Գաղ. Ա. 1., : Տակա  
 լին ինքը Անտիքի մէջ ձեռնադրուեցաւ. «<sup>Ճ</sup>ո  
 գին Սուրբ ըստ, զատեցէք ինձի՝ Բառնաբա  
 սը և Սուրբ Պավուլը ան գործին համար, որուն ես  
 կանչեր եմ ատոնք՝ ան ատենը ծոմ պահելով և  
 աղօթք ընելով ԶԵՒՏԻ ԴՐԻՎ անոնց վրայ և  
 խրիեցին,, : «ԶԵՒՏԻ ԴՐԻՎ» ձեռնադրեցին,  
 ով. — Յիսուս Քրիստոս հոն եկա՞ւ մարմնով,  
 ոչ. Հապա որո՞նք էին ձեռք դնողները. «Եսի  
 նի Առաքեալներէն անշուշո՝ արդ Պօղոս Ա  
 ռաքեալի այս խօսքը յայտնապէս սա կը նշանա  
 կէ՝ որ Տէրոջը պաշտօնեայ ըլլալու անձը նախ  
 պարտի Յիսուս Քրիստոսէ ընդունուի, և հա  
 պա մարդոցմէ ձեռնադրուի.... Զեզ ո՞ր Ա  
 ռաքելոց յաջորդներէն մէկը ձեռնադրեց Պատ  
 ուելիներ, բայց ի՞նչ կ'ըսեմ, դուք Աւետարա

Նին այս պատուերը չէք ընդունիր, հապա դուք  
մէկ կը սեպէք յաջորդաբար ձեռնադրուածն ալ  
չե ձեռնադրուածն ալ, զինելով Սուրբ Գրքին  
ընթացքին դէմ, անարգելով և կամքանի տեղ  
չե դնելով, Հայոց, Յունաց, Անդղիական եւ<sup>շ</sup>  
կեղեցիներուն այս Աւետարանական կարևոր  
սկզբունքը և պատուերը։ Երբեմն ալ մէկզմէկ  
կը ձեռնադրէք, դուք որ օրինաւոր ձեռնադր  
ութեամբ ձեռնադրուած չէք . . . Յիւաւի  
զգուանք կուգայ մարդուս ձեր խառնիխուուն  
ընթացքները տեսնելով։

Երուսաղեմի մէջ տան և մէկ Առաքեալ  
ները Մատաթիան լոկ ընտրելով չի բաւականա-  
ցան, այլ զայն յեւնադրեցն, յեւնադրեցն, յեւնադրեցն,  
ականջ ունիք նէ լսեցէք։

Արդ քանի որ այս յօդուածովնիս կարող եւ<sup>շ</sup>  
ղանք հաստատելու, թէ ան որ օրինաւոր յաջոր-  
դական ձեռնադրութեամբ ընտրուած չէ Յիւ-  
աւու Քրիստոսի Եկեղեցին մէջ պաշտօնեայ  
ըլլալու, պարզ Քրիստոնեայ մընէ, և թէ իւ-  
րեն համար է զսպելլեզուն, սանձ դնել լեզ-  
ուին։ Իսկ ան որ օրինաւոր յաջորդութեամբ  
ձեռնադրեալ պաշտօնեայ մընէ, Յիսուս Քրիս-  
տոսի Եկեղեցին, ամեն իրաւունք ունի, սաս-  
տելու, յանդիմանելու, սաստկանալու, չի խնա-  
յելու, հետեւաբար մեր սրբազնասուրբ Այ-

թուղիկոսը իւր Առաքելական իշխանութեամբ  
ըլ մեծ իրաւունք ունի ձեզի պէս տարօրինակ,  
ապօրինաւոր քարոզիչները յանդիմաննելու ամեն  
սաստկութեամբ, և իւր մինչև ցարդը ըրած յանդի-  
մանութեանցը վրայ աւելցնելու Պօղոս Առաք-  
եալին հետեւեալ խօսքը :

“Ովամեն խարէութիւնով և ամեն խորաման,  
կութիւնով լեցուած սատանայի որդի(ներ) թշ-  
նամի ։ բոլոր արդարութեան պիտի չի դադա-  
րիս (պիտի չի դադարի՞ք) Տէրոջը շիտակ ճամբա-  
ները ծռելէն ։ Գարծ ։ Առաջ ։ Ճ. 10 „ ։ Ահա  
այսպէս Պարոն Հեղինակդ դիմակաւոր Բարի  
մարդ և Բարի քրիստոնեայի ։ ահա այսպէս  
մեր Առթուղիկոսը ազատութիւն և իշխանու-  
թիւն ունի ձեզի վայելուչ եղած նախատական  
ածականները տալու ։ իսկ ձեզի կը մնայ եթէ  
կ'ուզէք գոնէ պարզ քրիստոնեայ մը ըլլալ սան-  
ձել լեզունիդ ։ բայց քանի որ այդ ձեր պարտա-  
կանութիւնը չէք պահեր, ձեր ընթացքը դէմ  
է քրիստոնէութեան ։ Այս Պատուելի, քու  
նախատակից խօսքդ դէմ է սուրբ Պատոց և  
քրիստոնէութեան, ինչպէս մարդկութեան ալ :

Ալյուսամ որ իրաւասէր ընթերցողները մեր  
կարծարանութենէն տռաւել տեսան :

Դիմակաւոր “Բարի մարդ և Բարի քրիս-  
տոնեայ , անուն Պարքին պարունակած անվա-

յել նախատինքները, թէ իբր մարդ և թէ իբր քրիստոնեայ թէպէտե մենք կընայինք ուրիշ շատ օրինակներ ալ յառաջ բերել յիշեալ գըրքէն այս մասին, բայց չուզեցինք առ այժմ երկարաբանութեամբ ճանձրացընել խոհական ընթերցողներնիս։

“<sup>♦</sup>արկ չե կայ մարդասպանի մը մարդասպանութիւնը հաստատելու համար, իւր քսան մարդ մեւցուցած ըլլալը յայտնել, մէկ կամ երկու արիւնը բաւ է միշտ”։

## ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

Անոր խաքէական ճեռնարկութիւններով, անձունի տրամաբանութիւններով, եւ խկական իմաստակուրեամբ լի ըլլալը։

“Կոիւի նամար լուտով դուրս մի ելլեր, նըլայ քէ երբոր բնկերդ քեզ ամհցընէ, դուն վերզը ինչ ընելիքդ չի գիտնաւ։

—«Առակ. ԻԵ. 8 :

<sup>♦</sup>Եղինակին տղիտութիւնը և տրամաբանութեան անտեղեակ ըլլալը՝ այնչափ յայտնի կ'երեւնայ իւր բոլոր աշխատութեանը մէջ, որ մարդ կը զարմանայ թէ այսպիսի անձ մը ի՞նչպէս կարողացեր է բառ բառի ետեւ շա-

ըել, և գիրք մը ձեւացընել, և յանպատռութիւն  
 ջշմարիտ ուսումնականութեան զայն հրատարա-  
 կել. և ան ալ այնպիսի Աղդի մը մէջ, որուն  
 ամենէն յետին մէկ անդամը որչափ անուսումն  
 ալըլլայ, տակաւին սխալ տրամաբանութիւն  
 մը չե կըլլեր . . . Աղէկ կ'ըլլար եթէ Պատ-  
 ուելին ինքըլինքը Ամերիկայի մէջ չե կարծեր .  
 այսպիսի մեծ նախատինք մը հայերը ոչ երբէք  
 կրնան կրել, և նոյնչափ ալ համբերել. ի՞նչ,  
 միթէ Ամերիկայի վայրենիները կարծեցիր հա-  
 յոց Աղդը, որ ելար և առանց ամչնալու այս-  
 պիսի խարեական ձեռնարկութիւններով, ան-  
 ձոռնի տրամաբանութիւններով, և իսկական  
 իմաստակութեամբ լեցուն գիրք մը անոր նուի-  
 ըելու համարձակեցար ո՛ Պղատոն . “Աչքի  
 տեղաչք, ուրեմն ըստ հին օրինաց, և ապտակի  
 փոխարէն ապտակ . թէ որ այս խօսքիս բարկանայ  
 նէ թողչե մեղանչէ Պարոն հեղինակը . վասն  
 զի՞ շատ չե մեր զինքը տգէտ յուղիղ դատողու-  
 թեան, և լիովին անտեղեակ օրինաց տրամաբա-  
 նութեան կոչելը, բաղդատմամբ իւր՝ տմբողջ և  
 միանդամայն լուսաւորեալ Աղդ մը իւր հայրենեա-  
 ցը վայրենինելուն տեղ դնելուն .

## ՆԱԽ

“Արովհետեւ մարդ քիթ ունի ինչպէս որ

խոզն ալ քիթ ունի , ուրեմն մարդս խոզ է,,  
 ի՞նչ կը ղարմանաս յարգոյ ընթերցող ասոր տր  
 բամաբանութիւն կըսեն , ոչ թէ նպարավաճառ  
 Տիմիթրիին հաշուեղիլքը . խօսքիս չես հաւա  
 տար նէ յիշեալ դիլքը բաց և կարդայ , և վըս  
 տահ եղիք՝ որ հոն Ճիշտ այս խելացնոր ընթաց  
 քով տրամաբանութիւն մը ճակտիդ պիտի զար  
 նուի , զքեզ համոզելու համար թէ մէր որբազնա  
 գոյն Ալանուղիկոսը Պեղաժեան է , զառն զէ Պեղաժեան ու  
 բունեան համայայն , իշնուանի նէ ‘Ուորդ’ ՚ի բնէ բարէ է,,  
 Ծակա մի միանգամայն զարմանքդ չի՛շարժեր  
 այս խելացնոր և անծոռնի տրամաբանութիւնը ,  
 միթէ Թահիթիի վայրենի մը անգամ պաղնայ  
 ուածք մը չի՛պիտի ձգէ այս նոր օրինակ տրա  
 մաբանութեան վրայ , և չի՛պիտի խոժոռի զայն  
 իւր աչաց առջեւ դնողին վրայ . . . եթէ մեր Ալ  
 թուղիկոսը Պեղաքեան մըն է այս սկզբունքը ըն  
 դունելուն համար , ուրեմն մեր Պատուելին ալ  
 Ճիղուիթական մըն է երրորդութիւն ընդունե  
 լուն համար . միաստուածեան մը հոգւոյ անմա  
 հութիւն ընդունելուն համար , Թիւրք մը մի  
 Վատուծոյ գոյութիւնը ընդունելուն համար .  
 զարձեալ եթէ մեր Ալթուղիկոսը Պեղաքեան  
 է այս տրամաբանական օրէնքով , ուրեմն մեր  
 Պատուելին ալ յիմար մըն է յիմարի պէս տրա  
 մաբանելուն համար , և յիրաւի յիմար մը աս

կից առաւել ծիծաղելի և անձոռնի տրամաբանութիւնն մը չե կրնար յօրինել . . . աղեկ կրլար եթէ Պատուելին ճանչնար իւր տկարութիւնը ՚ի մասին տրամաբանութեան, և ճանչնար նաևս Հայոց Աղդը՝ որն որ ոչ թէ Կաթուղիկոս մը, այլ եթէ Պեղաքեան թաղաւոր մըն ալ ունենան զայն առջի հարուածքով վար կառնեն իւր գահէն . . . բայց զմեղ եռապատիկ զարմացընող մասը սա է թէ՝ ի՞նչ համարձակութեամբ այս Պատուելին Աւետարանի քարողիչ ըլլալը իւր վրան առեր է, քանի որ տակաւին ուղիղ դատողութեան և տրամաբանութեան անտեղեակ է:

### ԵՐԿՐՈՐԴ

Մեր Պղատոնին անձոռնի տրամաբանութիւնները քանի անդամոր մեր տեսութեանըներ կայացան, այնչափ անդամ մեր յիշողութեանը են թակայ եղաւ Պարոն Աւետիսը, որն որ Պէտէքի Ամերիկացւոց ուսումնարանին մէջ հռջակաւոր էր իւր տարօրինակ տրամաբանական գրտումներուն համար . խիստ լաւ կը յիշեմ որ օր մը ելք ձմեռուան սաստկութենէն սահմրկեալ սօսպային շուրջը կանգնած էինք հետեւեալ տրամաբանութիւնը ըրաւ, “որովհետեւ”, ըստ քովինին բոքիկ սոքովը կից մը պարնելու ակարեւոր հարկերը և շարժառիթները զմարդ շար-

ԺԵԼՈւ կը ստիպեն, ապա ուրեմն մարդս ինքնին  
անշարժ էակ մըն է... խեղճ տղայ հազիւ այս  
խօսքը լմնցուց քսան բերնէ մէյմէկ ընտիր տիտ-  
ղոս ընդունեց... ովկ կրնար յուսալ բնաւ որ օր  
մը պիտի դայ որ ծիշտ Աւետիսեան օրինաց  
համաձայն տրամաբանութեամբ լի գիրք մը պի-  
տի հրատարակուի... խեղճ Աւետիս երանի թէ  
հոս գտնուեիր և զքեղ այս մասին աւելի յա-  
ռաջ մղող բառապու մը ունենայիր. մեր Սրբազ-  
նագոյն Աւաթուղիկոսը հետեւեալ խօսքը խօսեր  
է իւրաշխատութեանը մէջ. «միշտ իմացականու-  
թեաննոր ՚ինորոյ գաղափար տուողը զգայութիւ-  
նընէ, ինչ որ իմացականութիւննիս կ՚իմանայ զգա-  
յութիւններէն կընդունի և արտաքին գաղա-  
փարները կառնէ, և իմացականութիւննիս շատ  
անդամ զգայական բաղձանաց և հաճութեանը  
կը խաբուի և թելադիր կ'ըլլայ կամքին, և  
կամքն ալազատութեամբը կսկսի գործելու զգա-  
յական բաղձանաց ախորժելի երեցածը», (Ե-  
րես 11—12).

«Հիմա նայէ՛ սիրելի ընթերցող մեր Պատուե-  
լին այս եղբակացութենէն ի՞նչ հետեւութիւն  
կը հանէ».

«Վասր իւր Աւաթառանական նետն կամքը հարիւառաբու-  
նէնէ մը կը մղուի, որին անհայտ է որպատճ ու երկանափար մը  
ազատ է,, (Երես 28) է հէ... ովկ Աստուած ուր

Ենք արդեօք • անդէտ, անուսումն դատողու  
 թենէ զուրկ վայրենի Ամերիկացոց մէջն եմք  
 արդեօք • ով մարդ 'ի սէրն իրաւասիրութեան  
 այդ հետեւութիւնդ հանած ժամանակդ ուր  
 էիր, այդ հետեւութիւնը ի՞նչ համաձայնու  
 թիւն ունի եղրակացութեանը հետ, որու արդ  
 եօք կլեցընել կուզես այսպիսի դեղահատ մը որ  
 տղու մը գլխէն ալ մեծ է . . . . Չորս դիր նա-  
 յէ անդամմը • հետեւութեանդ ենթակայ ըրած  
 եղրակացութիւնդ մէյ մըն ալ աչքէ անցուր,  
 բայց ուշադրութեամբ • քննենք եղրակացութիւ-  
 նը . “միշտ իմացականութեան նոր ’ի նորոյ գա-  
 ղափար տուողը զգայութիւնն է,, ասոր ով կը-  
 նայ տարակուսիլ քանի որ մարդկային իմացա-  
 կանութիւնը մինչև այս օր նոր գաղափար մը  
 չստացաւ առանց արտաքին զգայութեան • ինչ  
 դիտութեան որ տէր կըլլայ իմացականութիւնը՝  
 անպատճառ լսելեաց միջոցաւ կ'ըլլայ, եւ ոչ  
 թէ ինքնին, ասանկ չէ՞ մի ո՛ Աշխարհ . ինչ գա-  
 ղափար որ ձեր իմացականութիւնը շահեցաւ  
 զգայութեամբ, այսինքն լսելեաց, տեսանել-  
 եաց, հոտոտելեաց, շօշափմանց, և ճաշակելեաց  
 միջոցաւ չեղա՞ւ մի, և արդէն իմացականութիւն  
 բառը ի՞նչ կընշանակէ եթէ ոչ իմանալ, որն որ  
 չի կընար յառաջ գալ առանց արտաքուստ պատ-  
 ճառի, և այն է զգայութիւն . “Եւ իմացա-

կանութիւննիս շատ անդամ զգայական բաղձաւ նաց և հաճութեանը կը խարուի, և ԹԵԼԸ ԴԻԲ կ'ըլլայ կամքին,, այս խօսքը լաւ նկատէ՝ պատուելի “ԹԵԼԸ ԴԻԲ ԿՇԱԾՈՎ ԿԵՄՔԻՆ” ոչ թէ կը բռնադատէ, և թէ՝ ըստ քու հետեւութեանդ ինքնիշխան կ'իշխէ . “և կամքն ալ Ե.Օ.Ը.ՏՈՒԹԵԸ.ՄԻԲ,” “Ե.Օ.Ը.ՏՈՒԹԵԸ.ՄԻԲ,” աղէկ կարդայ ոչ թէ իբր մեքենայ, ինչ պէս դու կը հետեւցընես . (Երես 27): “Ա’սկըսի գործելու զգայական բաղձանաց ախորժելի երեցածը,, :

Ետ առ ուրեմն քու հետեւութիւնդ թէ՝ կամքը աղատութիւնը կորսնցուցած չէ ըստ եղակացութեան . վասն զի եղրակացութիւնը “և կամքը իւր Ե.Օ.Ը.ՏՈՒԹԵԸ.ՄԻԲ Ե.Օ.Ը.ՏՈՒԹԵԸ.ՄԻԲ կը գործէ,, կ'ըսէ. ետ առ հետեւութիւնդ, վասն զի եղրակացութիւնը ամենեւին կամքին սանձը չի յանձներ իմացականութեան, այլ լոկ թելադրութիւն մը տուած է անոր, “ԹԵԼԸ ԴԻԲ ԿՇԱԾՈՎ ԹԵԼԸ ԴԻԲ ԿՇԱԾՈՎ” . Եյսպիսի պարզ եղրակացութենէ մը այսպիսի խելացնոր հետեւութիւն մը հանողը որքան տեղեակ կրնայ ըլլալ Տրամաբանութեան : Բայց Պատուելի, եթէ չես ընդունիր որ իմացականութիւնը զգայութեամբ կը հակի, կը հակամիտի, կընդունի, կը մերժէ, և այլ . և

Եթէ չես ընդունիր որ կամքը կը թելադրուի  
իմացականութենէն, հապա ինչու համար այս-  
չափ քարոզք կը հնջէք մարդոց ԱԿԱՆԻՒՆ  
(զգայութեանը) • ինչու կուզէք որ մարդիկ շե-  
տ գան, որով ընդունին և կամին ձեր քարո-  
զութիւնը • գացէք ուրեմն և դադրեցուցէք  
ձեր աշխատութիւնը • վասն զի կամքը ինքնին  
բոլորովին աղատ է, և բնաւ կարօտութիւն  
չունի իմացականութեան • և հետևաբար յայնը  
(լուսաց) և հրատարակումները (ուստանելուց) ո-  
չինչ են . . . . Երանի թէ այս սկզբունքը դուք  
ալ ընդունած ըլլայիք • ան ատենը՝ բոլոր այս  
աշխատութեանցը հարկաւորութիւն չէր մնար •  
բայց աղէ դուք ձեր ընթացքով սպաշտապանած  
սկզբունքնիդ կը հերքէք, և հակառակորդներ-  
նուդ սկզբունքը կը պաշտպանէք :

Եթէ ուզէինք այս մասին Պատուելիին ա-  
մեն մէկ անձոռնի տրամաբանութիւնները մէ-  
կիկ մէկիկ հոս ներկայացրնել՝ պիտի ստիպուե-  
ինք բոլոր գիրքը օրինակել • ապա ուրեմն բաւ  
սեպելով երկու շօշափելի օրինակները ինքզինք-  
նիս և ընթերցողնիս դոհ կընենք :

Խակ Պատուելիին իմաստակաբանութեան-  
ցը գալով առանց խղճմտանքի կընանք ըսել, որ  
իւր բոլոր աշխատութիւնը իմաստակաբանու-  
թեան դաստիարակումն է :

Խմաստակաբանութիւնը ինչպէս ուրիշ անզամ ալ ըսած ենք, տկար վաստաբաններուն մէկ հատիկ մխիթարութիւնն է . վիճաբանութեան առարկային վերաբերութիւն չունեցող ամեն խօսք, հարցում, առաջարկութիւն իմաստակաց սեպհական է գործածելը . հոս անկարեւոր հարցում մը, հոն երկդիմի շփոթ ասացուած մը, ասդիս խելացնոր կանչուըռոտոք մը, անդին անխմաստ առաջարկութիւն մը, տեղանոր ալ հակասական խօսքեր :

### ՀԱԿԱՍԱԿԱՆ ԽՕՍՔ ՄԸ

“Եւզի բերան եր գրտեն ուշ մը կարդալըն եղուը մէկուէ յժեշտին + երիու գլխաւոր պատմաններու համար . նախ տնոր համար որ գրտեն ԱՐԵՒ ամենենի նկարում չե կայ ճշմարդութեանունու” :

**Օ**պարմանք . ՎԻՉՎ մը կարդալով ի՞նչպէս կորողացեր է ՎԻՎԻՆ ԱՐԵՎ Ճշմարտութեան նկատում չըլլալը ստուգելու :

### ԱՆԿԱՐԵՒՈՐ ՀԱՐՑՈՒՄ ՄԸ

“Եւ իը գործոկուսին + ըւ մեղմէ զառ ուրիշ մը այս յանձնութեանը կը եւլաւանյառաւու եղած է արդեօք” (Արքագնագոյն Ապթողիկոսին գրքին համար կ'ըսէ) ամեն մարդ քեզի պէս մարդարէ՞ գիտցար Պատուելի՞ որ առանց գիրք մը ամբողջ կարդալու ,

և կամքեցի պէս քիչ մը կարդալով դրբին պարունակութեանը տեղեակ ըլլայ . դարձեալ ի՞նչ կուզես , ան չե կարդան քուկդ մի կարդան Պատուելի . առանց ան կարդալու մարդիկ ի՞նչ պէս պիտի կարենան քու չնաշխարհիկ պատգամներուդ վստահիլ :

### ԽԵՂԱՑՆՈՐ ԿԱՆՉՈՒԾՈՒԹ ՄԸ

“Եւ մեն+ մեծադէս խայբուած են+ ենէ աս գիրւը նախադին+ զւն ճանչնար նայեազնոն լեզուին և աշխին , , զարմանք Պատուելի . Հայկաբանուե կողմանէ ե՞րբ գերազանցեցիր Հայոց Հայրապետը . և անկից առաւել ե՞րբ տեղեակ եղար Հայոց Ճաշակին . միթէ գայլը կրնայ ոչխարին Ճաշակը դիտնալ . և ծաղրելի չըլլար եթէ ըսէ “Եշբայք ոչխար + այդ դաշտին խորը ժու ճաշուիտ աղէի չէ , , գայլին նպասակը կամացուկ մը կարծեմ կը նշմարես պատուելի :

### ԱՆԻՄԱՍ ԱՍԱՑՈՒԱԾ ՄԸ


“Հուսանի+ որ այս դիտողունիւնները Արծեղիսկոպոսին միտւ հանդէցընէն . և այսունեու իրեն ցաւ չընէ բրօնիւն ըանդից մէջ ունաած բաժանուածները , , :

Բարեսիրտ Պատուելի . դիտես որ Արքեպիսկոպոսը Բրօնիւթանդից բաժանմանը վրայ ամենեին չի ցաւիր . այլիւր ցաւը և մաքին անհանդստութիւնը իւր զաւկըներուն իրենց

մայրենի Ազգեն և Եկեղեցին բաժնուելնին է .  
Արդ՝ եթէ այդչափ կը փափաքիս զայն ցաւերէ  
և մտատանջութիւններէ աղատելու , ելի՛ր ,  
հեռացի՛ր , և ալ ևս մի՛ ջանար անոր հօտը  
պառակտելու . բայց քանի որ աս չես ըներ , քու  
ցաւակցութիւնդ անխմաստ է . և դերասանի մը  
ցուցուցած զայրոյթէն առաւել ազդեցութիւն  
չե կրնար ունենալ :

Ալ յուսամ որ խոհամիտ ընթերցողք , այս  
յօդուածովս պիտի բաւականանան համոզուե-  
լու , մեր Պղատոնին գրքին վրայ ըրած երկ-  
րորդ դիտողութիւններնու , այսինքն թէ  
“Կիրքը լեցուն է խաբեական ձեռնարկութիւն-  
ներով , անձունի տրամաբանութիւններով , և  
խակական խմաստակութեամբ ” :

Տետրակիս 23 երրորդ երեսին 16 երրորդ  
տողին մէջի յաջորդ բառը նախորդ պիտի ըլլայ :



1944-1945 学年第一学期  
高一数学期中考试卷



## ԱԶԴ

Ըզգայնոց գիտելի ըլլայ, որ մենք  
մեր ներկայ աշխատութիւնը պիտի  
կարենամք չորս տետրակով լըմիցը ~  
նելու հետզհետէ և շուտով, միայն  
թէ՝ կը խնդրենք որ Ըզգայինք ալ  
մեր աշխատութիւնը արդիւնաւոր  
ընելու համար՝ այս մասին մէջ մե-  
զի օդնական ըլլան. որով և մենք մեր  
կողմանէ երախտապարտ պիտի ըւ-  
լանք իրենց ~

3221

3123